

գամ գույքը կը ծեծէ, գոչելով)։

ԱՐՇԱԿ. — Արշակ, Արշակ, Արշակ... մինչեւ հո՞ս պիտի հասնէիր... (Կը հառաչէ եւ դանակը իր սիրտը կը մխէ ու կը տապալի աղմուկով։ Բեմին ետեւէն իրարանցում կը լսուի, Գողթան երգիչները ներս կը վազեն նուագարանները ձեռքերնին, ինչպէս նաեւ Արտաւան եւ Վոնոն՝ սարսափահար)։

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — (Կը վազէ Արշակի արիւնոտ եւ անշնչացած մարմնին վրայ) Օգնութիւն, փութացէ՛ք։

ԵՐԳԻԶ ՄԸ. — Մարած է։

ՎՈՆՈՆ. — Մեռած։

ԱՐՏԱԽԱՆ. — (Մտաւեղ) Ի՞նչ պատահան պիտի տամ Արքայից արքային, երբ իմանայ իր թագակիր եղբոր անձնասպանութիւնը։

Բ. ԵՐԳԻԶ ՄԸ. — Արիւնը հեղեղօրէն կը վազէ։

Գ. ԵՐԳԻԶ. — Ո՛վ երկինք... չունէ կ'առնէ... պիտի ապրի։

ԱՐՏԱԽԱՆ. — Երգի՛չ, մխրթարութեան չիթ մը վաթեցուցիր սրտիս խորը։

Բ. ԵՐԳԻԶԸ. — Ձի չնչեր։

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Մէկը՛ր քաշուեցէք։ (Բոլորն ալ մէկդի կը քաշուին։ Դրաստամատ Արշակի կուրծքէն կը յափշտակէ արիւնոտ դանակը եւ գալով սեղանին մօտ, իր տեղը, գինիով կը լեցնէ բաժակը եւ ձեռքերուն մէջ առնելով գայն, պահ մը կը կենայ)։

Գ. ԵՐԳԻԶԸ. — Մեռած է, մեռած։

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Այսպիսի ողբերգութեամբ մը պիտի վերջանար թագաւորի մը կեանքը, որ բաժնուած է փայլուն յաղթանակներու եւ խորունկ թշուառու-

թեան մէջ։ (Կը պարպէ բաժակը մինչեւ ցմբուր, յետոյ քեզանիքին տակէն հանելով դանակը) Ա՛յ, մաղերս դիտու ա՛յրայ կը ցցուին, Դրաստամատ, Դրաստամատ, Դրաստամատ... Ես եղայ, սիրելի արքայ, ես եղայ քու մահուանդ պատճառը։ Ո՛վ դանակ, դու վերջ տուր կուրծքիս մէջ կուտակուած վրէժին եւ զայրոյթին։ (Դանակը կը մխէ սրտին մէջ եւ անշնչացած կ'իյնայ Արշակի դիակին մօտ։ Ուժգին իրարանցում մը, մինչ Արտաւան եւ Վոնոն գարհուրած՝ դուրս կը փախչին, Գողթան երգիչները խելայեղօրէն կը խուժեն բեմին վրայ եւ ծունկի գալով Արշակի եւ Դրաստամատի դիակներուն առջեւ՝ խմբապետը կ'ըսէ յուզուած ձայնով)։

ԽՄԲԱՊԵՏ. — Աստուծո՛վ ջախջախուիս, Շապուհ, Արքայից արքայ։ Գարշելի ըլլաս յաւիտեան։ Կանչենք Մուսան եւ երդենք։

ԽՄԲԵՐԳ.

Ո՛վ իմ Հայաստան, երկիր դու քաջաց Ծընող, սնուցիչ մեր վեհ դիւցազանց, Թող միշտ յաւիտեան փայլին ջահ աստղեր Բաջին Արշակայ եւ Դրաստամատի։

Շիրիմներն անոնց թրջենք արցունքով եւ ծածկենք զանոնք խանդավառմամբով։ Երգիչներ Գողթնի դաշոյնն այդ բոսոր Մեղ հրաւէր կարգայ արդար վրէժի։

Օ՛ն, դէպի կըրիւ սուրբ ազատութեան վեր կաց, Հայաստան, աշխարհ Արամեան, ճակատդ հրապարտ Մասիսի ուղղած, Որ թափէ շանթեր ի դուրս մատնչաց։

(Երգիչները քեւերնուն վրայ առած երկու դիակները՝ բեմէն դուրս կը հանեն)։

Վ ա ր ա գ ո յ ր

ՎԵՐՁ

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՅ ՀԱՒԱՏՔԸ

ՊԱՏԱՐԱԳ ՎԱՍՆ ՆՆՁԵՑԵԼՈՑ

Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարքը՝ Գարեգին Արքեպիսկ. Սալապուրեան վերջերս կարգ մը լուսարանութիւններ տուած է Ս. Պատարագի զոհին եւ Հոգեհանգրտեան պաշտօնի մասին¹։ Լուսարանութիւններ, որոնք դժբախտաբար կը հեռանան Հայաստանեայց Եկեղեցւոյ դարաւոր աւանդութենէն, եւ հետեւաբար՝ անընդունելի են, մեր համեստ դատաստանով։

Թողով այդ կարծեցեալ լուսարանութիւններուն առաջին մասը, ուր Ս. Հաղորդութեան եւ պատարագի խորհուրդի մասին անճիշտ եւ թերի բացատրութիւններ կը տրուին — որոնք աւելի բողոքական մեկնաբանութիւններ են եւ խորթ՝ հայ բնիկ աստուածաբանութեան — ներկայ յօդուածով կ'ուզենք ծանրանալ երկրորդ մասին վրայ, ուր նմանապէս կարգ մը թիւր հաւաստումներ կու գան խոցել հաւատացեալ ականջներ։

Խօսելով Ս. Պատարագի արդիւններուն եւ զերբնական զօրութեան վրայ՝ Սրբ. Պատրիարք Հայրը կ'ըսէ. « Եւ այս պատարագը կը մատուցուի կենդանեաց (ողջերուն) համար, անոնց մեղքերուն քաւութեան եւ թողութեան համար՝ զղջումով եւ ապաշխարութեամբ պայմանաւորուած. եւ ո՛չ մեռելոց, ննջեցեալներուն համար »²։

Ապա անցնելով հոգեհանգստի աղօթքներուն, դարձեալ նոյնը կը կրկնէ. « Հո-

գեհանգստեան պաշտօնները, որոնք ի յիշատակ ննջեցեալներուն կը կատարուին, բացարձակապէս անկախ են Ս. Պատարագէն, որ կը մատուցուի ի յիշատակ Յիսուսի ողջերուն կողմէ եւ ողջերուն համար »³։

Հուսկ եղրակացնելով եւ ամփոփելով իր խօսքերը, կը յարէ. « Ս. Պատարագը կը մատուցուի ողջերուն, անոնց մեղքերու քաւութեան եւ թողութեան համար։ Հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի ի յիշատակ ննջեցեալներուն՝ եկեղեցիին մէջ, անկախ Ս. Պատարագէն եւ Պատարագի խորհուրդակատարութեան աւարտումէն յետոյ »⁴։

Սրբ. Պատրիարքը կը կրկնէ եւ կ'երեւելն իր այս հաւաստումը նաեւ յետ անցողակի նկատելու Ս. Պատարագի մատուցման ընթացքին կատարուած « կենդանեաց եւ մեռելոց » յիշատակութիւնը, որ՝ ըստ իրեն՝ լոկ ընդհանուր յիշատակութիւն մըն է⁵։

Դարձեալ Սրբ. Պատրիարքն է որ կը խօսի. « Ննջեցեալները անդամ ըլլալով յաղթական Եկեղեցիին, որպէս մարմնազերծ հոգիներ՝ ուղղակի հաղորդակից են Տիրոջ հոգիին. մինչ ողջերը, զինուորեալ եկեղեցիի անդամներ, հոգեպէս հաղորդակից են Քրիստոսի՝ Ս. Պատարագի խորհուրդին միջոցով »⁶։ Այս վերջին բացատրութեամբ, որքան կը հասկնանք, Սրբ. Պատրիարք Հայրը կը ջանայ մեկ-

1. Շողակաթ, Է. (1958, թ. 4-5) էջ 150-153 (Ս. Պատարագի խորհուրդը եւ Հոգեհանգստեան պաշտօնը)։ Նոյն գրութիւնը տե՛ս նաեւ թաւադրումը)։ Նոյն գրութիւնը մէջ, 15 եւ 16 Մայիս 1958, մամակ օրաթերթին մէջ, 15 եւ 16 Մայիս 1958, էջ 1 եւ 3 (Ս. Պատրիարք Հօր լուսարանութիւնները)։

2. Շողակաթ, անդ, էջ 151-152 (ընդգծումները հեղինակինն են)։

3. Անդ, էջ 152։

4. Անդ, էջ 153։

5. Անդ, էջ 152։

6. Անդ, էջ 38։

նաբանել նաեւ թէ ինչո՞ւ — ըստ իրեն — Ս. Պատարագը միայն ողջերու համար է, եւ ննջեցեալներու համար՝ ոչ:

Նման գաղափարներ տարիներ առաջ հրապարակ նետած էր, իր ձեռով, նաեւ հանդուցեալ Փառէն Սրբղ. Մեղրոնեան «Քրիստոնեան գերեզմանէն անդին» երկար յօդուածաշարքով մը, եւ յայտարարած՝ թէ մեր քով ննջեցեալներու ի նըպաստ պատարագ մատուցանելու սովորութիւնը նորամուտ է, այն ալ օտար աղբեցութիւններու արդիւնք⁷: Հիմա Գարեգին Սրբղ. կարծէք կ'ուզէ հարցը արմատէն լուծել, եւ այդ նորամուտ կարծուած սովորութիւնը ջնջել բոլորովին, իր նոր լուսաբանութիւններով, ընդունելով հանդերձ Հոգեհանգստի կարեւորութիւնը՝ իբր քրիստոնէական սովորութիւն:

Այստեղ կ'ուզենք իսկոյն անդրադարձընել որ այս հարցը, այն է ննջեցեալներու հոգիներուն ի նպաստ Ս. Պատարագ մատուցանելու խնդիրը՝ սերտ աղերս ունի աստուածաբանական ուրիշ հարցի մը հետ, այսինքն՝ յետ մահու անմիջական հատուցումի հարցին հետ, ուրիշ խօսքով՝ քաւարանի եւ առանձնական դատաստանի զոյգ հարցերուն հետ: Արդարեւ, եթէ իսկապէս Ս. Պատարագը կը մատուցուի ննջեցեալներու հոգիներուն ի նպաստ — ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. Հայրերուն եւ հեղինակաւոր Վարդապետներուն — եւ այդ հոգիները Ս. Պատարագի հզօր արդիւնքով կը թեթեւան իրենց մեղքերու մնացորդներէն (հարցը զղջեալ մեղաւորներու մասին է), նուիր իսկ գործով՝ ընդունած եւ լուրջապէս բացատրած կ'ըլլան թէ յետ մահու վայ ժամանակաւոր պատիժներու վայր մը, տանջանարան մը, ուրիշ բառերով՝ կայ քաւարանը, ուր ինկած է հոգին՝ քաւելու համար իր յանցանքները. եւ այս՝ անպատճառ աստուածային մէկ կարգադրու-

թեամբ, որ տեղի կ'ունենայ առանձնական դատաստանով: Եւ թէ այդ քաւարանէն է որ կ'ազատի ննջեցեալին հոգին՝ Ս. Պատարագի հզօր միջնորդութեամբ, եւ կը մտնէ աւերբերու դասը, այն է երկնքի արքայութիւնը:

Ուրեմն շատ տրամաբանական է որ բոլոր անոնք՝ որ կը մերժեն առանձնական դատաստանի եւ քաւարանի գոյութիւնը — ինչպէս վերոյիշեալ հեղինակները — յանգին մերժելու նաեւ ննջեցեալներու ի նըպաստ Ս. Պատարագ մատուցանելու կարելիութիւնը: Փառէն Սրբղ. նկատելով հարցերուն այս անբաժանելի, եւ ուղեւորով խուսափել այս վերջին եղբայրացութիւններէն (առանձնական դատաստան, քաւարան), կը յաւելուր թէ ննջեցեալներու ի նպաստ աղօթքները, յիշատակութիւնները եւ պատարագները կը կատարուին սա իմաստով եւ համոզումով՝ թէ մեր ննջեցեալները յոյսով պիտի սպասեն կայանին մէջ մինչեւ Քրիստոսի վերջին գալուստը եւ ընդհանրական դատաստանին օրը⁸: Իր փաստերը, սակայն, այնքան անզօր ու տկար էին, որ ինքզինքն արդարացնելու համար՝ զիմած էր նախատինքներու եւ հեղեցական թիւնները՝ իր ուղածին համաձայն կըրծատած եւ խեղաթիւրած էր⁹: Իսկ այժմ Գարեգին Սրբղան աւելի հեղինակօրէն կ'ուզէ փակել խնդիրը. զժրախտաբար չի փաստեր իր հաւաստումները. մեր Հայրերէն եւ եկեղեցական հեղինակներէն ոչ մէկ վկայութիւն կը յիշատակէ՝ ցոյց տալու համար թէ Ս. Պատարագը չէ կարելի մատուցանել ի նպաստ ննջեցեալներուն:

Հետեւաբար մեզի կը մնայ ի մի հաւաքել մեր նախնեաց քով դառնուած այն բոլոր վկայութիւնները, սկսելով հինգերորդ դարէն, ուր կը խօսուի ննջեցեալներու ի նպաստ Ս. Պատարագ մատուցանելու սո-

վորութեան մասին, եւ տալ հարկ եղած լուսաբանութիւնները՝ իւրաքանչիւր հատուածի բովանդակութիւնը վերլուծելով. ստով մեր ընթերցողներն իսկ պիտի կարենան եղբայրացնել՝ թէ ո՞րքան անճիշտ են խաչատուրեան Պատրիարքի հաւաստումները:

Միաժամանակ անուղղակիօրէն չօշափած կ'ըլլանք նաեւ քաւարանի եւ առանձնական դատաստանի հարցերը. եւ ոչ միայն անուղղակի կերպով, այլ նաեւ յայտնապէս ալ պիտի ստիպուինք խօսիլ անոնց մասին, երբ կարգը գայ յիշատակելու Յովհ. Երզնկացիի մէկ հատուածը, որ զժրախտաբար ցարդ կ'իստառ ու կըծատ ձեւով միայն ծանօթ է մեր բանասէրներուն: Հետեւաբար մերթ պիտի դիմենք նաեւ ձեռագրական համեմատութիւններու, խորագոյն կերպով քննելու եւ լուսաբանելու համար հարցերը, անկողմնակալ սառնասրտութիւնը առած մեզի իբր ուղեկից եւ առաջնորդ:

Մեր ուսումնասիրութեան առարկայ պիտի ըլլան միայն մեր հայ Եկեղեցւոյ Հայրերն ու մեծիմաստ վարդապետները, որոնց պրութիւններուն զժրախտաբար այնքան ծանօթ չի թուիր Գարեգին Սրբղան. ու թերեւս ասոր համար է, կը կարծենք, որ կը չեղի անոնց լուսաշող ուղիքն եւ չարաչար կը սխալի այս հարցերուն մէջ, տալով յերկրածոյ եւ ինքնաստեղծ պատգամներ, որոնք չունին աստուածաբանական որեւէ հիմ:

Մեր ուսումնասիրութեան ընթացքին՝ միշտ պէտք է մտքի առջեւ ունենանք նաեւ այն տեսակէտն ալ, որ մեր Ս. Հայրերը յաճախ հարցին այս մեր արդի բանաձեւով չէ որ կը մերձենան, այսինքն՝ թէ արդեօք ննջեցեալներու ի նպաստ կարելի¹⁰ է Ս. Պատարագ մատուցանել, թէ՛ ոչ. անոնք մեծամասնութեամբ այս խնդրին նըկատմամբ անուղղակիօրէն կը խօսին՝ երբ

ննջեցեալներու մասին կը ճառեն ընդհանուր նկատողութիւններով, կամ սղաւորներու միութարութիւն կը քարոզեն, կամ երբ Ս. Պատարագի մէջ ննջեցեալներու յիշատակութեան աղօթքները կը մեկնաբանեն. մեզի կը մնայ, ուրեմն, այդ բացատրութիւններուն խորը թափանցել, ըմբռնելու համար մեր Հայրերու հարազատ միտքը:

Այժմ թող խօսին մեր նախնիք:



ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ

«Յաճախապատում»ը հաւաքածոյ մըն է քսանեւերեք ճառերու, որոնք կը խօսին քրիստոնէական կեանքի ճշմարտութիւններուն եւ բարոյական օրէնքներու վրայ. ԺԻ-ԺԳ. դարերու ընթացքին է որ այս գիրքը Ս. Գրիգոր Լուսաւորչի ընծայուած է: Արդի բանասէրները զանազան կարծիքներ յայտնած են անոնց հեղինակին մասին. Մանուկ Աբեղեան Յաճախապատումը կ'ընծայէ Ս. Մեսրոպի, գրութեան թուականը համարելով 420ը¹⁰: Իսկ ուրիշներ կը համարին որ այդ ճառերը գրուած ըլլան աւելի ուշ, սակայն 500 թուականէն առաջ¹¹:

Հետեւաբար եթէ նոյնիսկ Ս. Գրիգոր Լուսաւորչի կամ Ս. Մեսրոպ չըլլայ հեղինակը այդ ճառերուն, ամէն պարագայի մէջ, Յաճախապատումը՝ ընդհանուր Եկեղեցւոյ, եւ մանաւանդ հայ Եկեղեցւոյ վարդապետութիւնը ներկայացնող արժէքաւոր մատենա մըն է, որ դարերէ ի վեր կը վայելէ մեծ հեղինակութիւն:

Յաճախապատումը զանազան աուրթիւններով կը յորդորէ աղօթել ննջեցեալներու համար, յատկապէս անոնց համար, որոնք՝ թէեւ մեղաւոր, սակայն իրենց մահէն առաջ ցոյց տուած են զղջումի ստույգ

7. Հասկ. ԺԵ (1946, Թ. (9-10), էջ 249-251:

8. Անդ, էջ 249-250:

9. Այս խնդիրներու մասին մանրամասն մատենա-

դիտութիւն մը տուած ենք՝ քննական դիտողութիւններու հետ, Բազմավեպի մէջ, ձե. (1949, Թ. 3-4, 5-6) էջ 77-84, 97-101:

10. Հայոց հին գրականութեան պատմութիւն, զերբ առաջին, տպ. Պէյրութ (Սեւան տպ.) 1955, Բ. տպագրութիւն, էջ 125-127:

11. Հմմտ. Հ. Վ. Հացունի, Երբ շարադրուած են

Յաճախապատում ձառք, «Բազմավեպ», 2Ը (1930, Թ. 10) էջ 401-406: Հ. Կ. Քիւրաբեան, Պատմութիւն հայ գրականութեան, Առաջին մաս, տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1944, էջ 90-91:

նշաններ. կը յանձնարարէ յիշատակել զանոնք Ս. Պատարագի մատուցման ընթացքին, հայցել անոնց համար մխիթարութիւն եւ քաւութիւն՝ հանդերձեալ կեանքին մէջ: Եւ եթէ ուշի ուշով կարդանք Յանախայատումի ԺԲ. ԺԳ. ԺԶ. ճառերը, պիտի համոզուինք որ խօսքը՝ Ս. Պատարագի ընթացքին կատարուելիք նշաններուն յերկար լոկ ընդհանուր յիշատակութեան մը մասին չէ միայն, այլ Ս. Պատարագի արդիւնքը լրիւ անոնց յատկացնելու մասին է. Քրիստոսի պատարագն է ինքնին՝ որ անոնց համար, անոնց ի նպատակ, անոնց ի յիշատակ կը մատուցուի:

Բնական է՝ չէ կարելի աշտեղ երկարօրէն մէջբերել վերոյիշեալ ճառերը. կը բաւականանանք քանի մը յատկանշական հատուածներ միայն յիշատակելով, որոնք պայծառօրէն կը ներկայացնեն այս բոլորը. բա՛ւ է որ, դարձեալ կը կրկնենք, բարի միաժառն ունենանք անկողմնակալ մտայնութեամբ մերձենալու բնագիւրծներուն:

1. — ԺԲ. ճառին մէջ խօսելով անդենական կեանքի մասին եւ պարզելով ճշմարիտ սուղի գաղափարը, որ պէտք է լի ըլլայ յոյսով, կը յաւելու.

«Արտասուփ օգտակար այս եմ ի տէր, որ գմեռելոցն գլխատակս մեղացն եւ գանձանց առաջի Աստուծոյ ընծայել եւ ոչ առաջի հրապարակաց. որ լինի սրբարան մեղաց, եւ ոչ ի պատիժս: Եւ ջերմեռանդ արտասուփ միշտ յաղօքսն կանխել, ի տուէ եւ ի գիշերի հսկել: Եւ ցաւագին հեծութեամբ եւ պաիօք պնդութեամբ, բազում գղջմամբ եւ ապաշաւանօք գլխալանսն սգալ հանապագ, որ վրիպեցան յերանելի յուսոյն եւ ի յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ: Զի որ իւր մեղօքն ի խոստացեալ Աստուծոյ բարեացն գրկեցաւ, զնա սգացուփ այնպիսի ապաշաւանօք. եւ ե-

ղուկ վարկանել զվրիպեալսն յանաց բաւեացն: Եւ արտասուակից աղօթիւք եւ առատաւոր ողորմութեամբ եւ ամենայն բարեգործութեամբ, հանդերձ Գրիստոսի պատարագան գԱստուած ի հաշտութիւն անել, եւ հրաժարելոյն մխիթար լինել ի հանդերձեալսն»¹²:

Ակնյայտնի է այս կտորին մէջ այն հոգեկան հաղորդակցութիւնը որ կայ նշանցեալներուն եւ ողջերուն միջեւ. ասոնք ապաշխարական դործերով, նուիրատուութիւններով եւ բարեբարութիւններով կարող են հաշտեցնել զԱստուած՝ յանցապարտ նշանցեալին հետ. այսինքն՝ կրնան անոնց տեղ ապաշխարել. այս է ճշմարիտ սուղը եւ օգտաւէտ արտասուքը. բայց ամէնէն աւելի Քրիստոսի պատարագն է որ կը կատարէ այդ փրկարար դերը: Այս հատուածին մէջ, Ս. Պատարագի ընթացքին կատարուելիք լոկ յիշատակութեան մը խօսքը չէ որ կ'ըլլայ. այլ մանաւանդ թէ՛ վարժէք այդ վերոյիշեալ բարեգործական նուիրատուութիւնները եւ ապաշխարական դործերն իսկ անարժէք կը մընան՝ առանց Քրիստոսի պատարագին. «հանդերձ Գրիստոսի պատարագան» բացատրութիւնը ցոյց կու տայ Ս. Պատարագին մեծ կարեւորութիւնը՝ նշանցեալներու փրկութեան համար:

2. — ԺԳ. ճառին մէջ աւելի մանրամասնելով իր խրատները՝ Ս. Պատարագի մատուցման պարմաններուն եւ կերպին վրայ, կը յարէ.

«Եւ ի մատուցանել գահաւոր եւ գաւաւսակի գփրկական խորհուրդն, եւ անդ յիշէ գմարդասիրութեանն երախտիս, եւ խնդրէ ջերմեռանդ արտասուփ գփաւորութիւն մեռելոց եւ կենդանեաց, եւ առնու գլխդրելին, մանաւանդ եթէ սուրբ իցէ եւ անարատ եւ ազատ ի մեղաց մատուցող պատարագին, եւ ողորմեալ հաւատով ստանայ անձին գփառացն պաակս: Եւ

վասն որոց պատարագն է, քաւութիւն յուսով շնորհի ի բարեբար տեսնելն»¹³:

Սարսափելի խորհուրդը՝ Ս. Պատարագն է, ուր քահանան (որ պէտք է սուրբ, անբասիր եւ անարատ ըլլայ), կը յիշատակէ ո'չ թէ նշանցեալները, այլ Աստուծոյ մարդասիրութեան անհատ երախտիքը, եւ կը հայցէ քաւութիւն մեռելոց եւ կենդանեաց. նկատել՝ որ նախ դրոշմած է մեռելոց:

Եւ այս՝ սոսկ խնդրանք մը չէ՛, իբր ըրիստոնէական պարտականութիւն մը՝ մեր կողմէ, այլ խնդրանք մը՝ որ իսկոյն նկատի կ'առնուի Աստուծոյ կողմէ, եւ քաւութիւն կը շնորհուի անոնց՝ որոնց համար Ս. Պատարագը կը մատուցուի: Այս իմաստով՝ շատ նշանակալից է վերջին խօսքը. «Եւ վասն որոց պատարագն է». որոնց համար, որոնց ի նպատակ անշուշտ անոնց՝ որոնց համար քահանան արտասուախառն աղօթեց ու յիշեց Աստուծոյ մարդասիրութիւնը. մեռելոց եւ կենդանեաց:

3. — Նոյն ճառին մէջ պատարագիչ քահանային վարքի սրբութիւնը նկատելէ յետոյ, կ'աւարտէ իր խօսքերը՝ Ս. Պատարագի հզօր արդիւնքները թուելով.

«Կատարեալ առաքիւնութիւն խնդրէ ողորմութիւն ի սպասաւորաց խորհրդոյն. զի կեանք է փրկութեան մեռելոց. եւ մի՛ լիցի կամաւոր մոռօք ի դատապարտութիւն ի տեսնել. զի ամենայն ինչ նովալ է եւ ի նա կատարի՝ կենդանեաց եւ մեռելոց»¹⁴:

Ճշմարտութիւնը է ինքն Աստուած, որ սրբութիւն է եւ սրբութիւն կը փնտռէ, մանաւանդ սուրբ խորհուրդի բոլոր ապաստարաններուն մէջ: Եւ այդ խորհուրդը, անհատ պատարագը, է աղբիւր հոգեկան ամէն տեսակ բարեքներու, կեանքն է ինքնին. ամէն ինչ անով կը կատարուի, անով կը նուիրականանայ, անով կը սրբանայ. ամէն ինչ անոր մէջ կը գտնէ իր լը-

րումը. ամէն շնորհք անով կ'իջնէ ի շահողներուն եւ նշանցեալներուն:

Հոս ալ նմանեցնելով. թէպէտ այս անգամ նախ ողջերը կը յիշատակուին. ուրեմն հաւատարապէս մեռելոց եւ կենդանեաց, կենդանեաց եւ մեռելոց:

4. — Դարձեալ նոյն ճառին մէջ, յետ խօսելու Ս. Պատարագի ընթացքին կատարուած սուրբերու յիշատակութեան վրայ, եւ այդ առթիւ՝ սուրբերու բարեխօսութեան հզօր արդիւնքները թուելէ վերջ, կ'ըսէ.

«Իսկ հաւատացելոց մեղուցելոց եւ խոստովանողաց եւ ապաշխարողաց եւ հաղորդեալի ի փրկական խորհրդոյն, եւ հրաժարեալ յաշխարհէս, եւ նոցա կատարեցին յիշատակի՝ Գրիստոսի պատարագան, եւ աղօթիւք եւ գթով տնանկաց եւ այլ բարի գործով. զի վերջնովս բարեգործութեամբ հանգուցեալն նորագեցին նորագութեամբ կենացն անվախսանից»¹⁵:

Խօսքը այստեղ յայտնապէս զղջացեալ մեղաւորներու մասին է, որոնց յիշատակը պէտք է կատարել Քրիստոսի իսկ պատարագով. եւ այդ պատարագին պիտի ընկերանան բարեգործութիւններ եւ ողորմութիւններ, որպէսզի ասոնցմով նշանցեալները նորոգուին, այսինքն՝ յաւիտենական կեանքի անվախճան երանութիւնն ունենան: Ինչպէս կը ճշմարուի, հոս ալ՝ Ս. Պատարագի ընթացքին կատարելիք լոկ ընդհանուր յիշատակութեան մը մասին չէ՛ խօսքը. այս կտորին մէջ Քրիստոսի պատարագան՝ նոյն է մեր յիշատակած առաջին կտորին մէջ հանդերձ Գրիստոսի պատարագան բացատրութեան հետ:

5. — Ամբողջացնելու համար Յանախայատումէն քաղած մեր հատուածները, ընթերցողներու ուշադրութեան կը յանձնենք տակաւին ուրիշ երեք կտորներ, ուր նոյն գաղափարները կը կրկնուին, նման կամ աւելի պարզ բանաձեւերով:

12. Սրբոյ Հօրն մեռել երանելոյն Գրիգորի Լուսաւորչի ՅԱՃԱՆԱՊԱՏՈՒՄ ձԱՌՔ ԼՈՒՍԱՎՈՐՔ

(Բնական հրատ. Ա. Տէր Միքէլեանի), տպ. Ս. Էջմիածին, 1894, էջ 156:

13. Յանախայատում, էջ 166:

14. Անդ, էջ 167:

15. Անդ, էջ 169:

ա) « Այլ որ ոչ դարձան յառաջագոյն յապաշխարութիւն եւ ոչ ի վախճանի զըզնացան, եւ յուսահատ եւ առանց խոստովանութեան եւ անմեղութեան խորհուրդն՝ զի՞նչ պարտ է ասել վասն նոցա յիշատակաց. որ բազում ողբոց եւ արտասուաց արժանի են, եւ ծանր վիշտ ունին ի Քրիստոսէ: Բայց յառաջագոյն մեղուցելոցն եւ ստոյգ խոստովանողացն եւ ապաշխարողաց միշտ կատարեցին յիշատակք. եւ որ ի ժամ ելանելոյ գղջանան»¹⁶:

բ) « Այսպէս շահի օգտից են գլխատակս հանգուցելոցն առնել ուղիղ սրտիւ, արդար եւ նշմարիտ եւ սուրբ հաւատով, ահիւ եւ սուրբ սրտիւ, ողջամիտ յուսով ի գովեստ Աստուծոյ: Զի լինիցի ընդունելի մեր պատարագն ի ներքոյ վարագործին ի կենդանարար կեանս վերաբերելով, եւ վայելել յերանելի բարութիւնս ի խնամս կենարար սիրոյն աւետեացն խոստացելոցն»¹⁷:

գ) « Այսպէս յուսալ եւ հաւատալ ի սրբոցն ժողովս եւ ի բարեխոսութիւնսն, որպէս գիտեանայս որ կան առաջի այնորիկ՝ որ նստին ընդ աջմէ Հօր, եւ զիրաքանչիւրոցն պատարագս ընծայեն աղօթիւք առ ի հաշտութիւն ակամայ եւ կամաւոր սխալանաց հաւատացեալ ժողովրդոց վախճանելոց եւ կենդանեաց... եւ հաւատան առնուլ զխնդրելին յամենեցունց փրկչէն, ըստ յուսոյ հաւատացեալ ժողովրդոց, մանաւանդ ի ձեռն փրկական խորհրդոյն սրբապէս կատարմանն ի Քրիստոս Յիսուս»¹⁸:

Այս կտորներէն կը հետեւի որ անպակաս մեղաւորներուն վրայ պէտք ենք ողբալ խաղապէս. « Այստակցաբար արտասուեսցուք գուրացողսն հաւատոյ »¹⁹ պիտի գոչէ, դարեր վերջ, մեր Շնորհալի Հայրապետը՝ Վարդանանց շարականին մէջ: Բայց զղջացեալները միշտ հարկ է յիշել. եւ այս յիշատակութիւնը՝ հաւատքով եւ ա-

պաշաւի արցունքով օծուած, մեր պատարագին հետ խառնուած, կենդանարար զօրութիւն մը կ'առնէ:

Ու տակաւին նմանութիւն մըն ալ. ինչպէս սուրբերը կը բարեխոսեն ձերկեքի մէջ, այսպէս ալ երկրիս վրայ քահանաները՝ ննջեցեալներու եւ ողջերու համար մատուցած պատարագով՝ կ'ընդունին հաշտութիւն եւ քաղութիւն, կամաւոր եւ ակամայ մեղքերու եւ յանցանքներու փոխարէն: Այս բաղդատական բանաձեւը կ'ամրացնէ մեր բացատրութիւնը եւ մեր հարցը կը կապէ սերտօրէն հաղորդութիւն սրբոց կամ սրբոց բարեխոսութիւն կողմէն ուսած ուրիշ հարցի մը հետ. արդարեւ այս վերջին կտորը առնուած էր մարտիրոսներու եւ սուրբերու բարեխոսութեան նրբորում ճառէն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ողջերու եւ ննջեցեալներու միջեւ սերտ հաղորդակցութիւն մը գոյութիւն ունի, որու կեդրոնաձիգ լինեն է Քրիստոսի Ս. Պատարագը, զոր քահանաները կը կրկնեն սուրբ խորհուրդին մատուցմամբ: Եւ ահա այդ պատարագին արժանիքներով (որու աստուածային զօրութենէն կը նուիրականանան նաեւ մեր ողորմութեան գործերը՝ ի նպաստ ննջեցեալներու), մեռելներու հոգիները կը նորոգուին, կը մխիթարուին, կը կենդանանան հոգեւին: Ուրեմն, ինչպէս ողջերը, նոյնպէս նաեւ ննջեցեալները խկապէս եւ հաւասարապէս հաղորդակից են Քրիստոսի՝ Ս. Պատարագի խորհուրդին միջոցով, թէեւ անոնք այլեւս զինուորեալ եկեղեցւոյ մաս չեն կազմեր: Հետեւաբար, զինուորեալ եկեղեցւոյ մաս չկազմելը պատճառ մը չէ՝ որ այդ հոգիները չկարենան հաղորդակից ըլլալ Քրիստոսի արժանիքներուն՝ Ս. Պատարագի միջոցով: Ուստի, պատճառաբանութիւնն ինքնին, որու վրայ կը կրթնէր

Գարեգին Պատրիարք Նաչատուրեան, խախտու է եւ յերկրածոյ: Կարօտ ննջեցեալները եւ ողջերը՝ հաւասարապէս կ'օգտուին Ս. Պատարագէն. այսպէս կ'ուսուցանէ Յաճախապատուը:

Սուրբերը, մարտիրոսները, այո՛, յաղթական եկեղեցւոյ անդամներ են, անկարօտ են մեր նպատակներուն. ու մենք անոնց յիշատակը կը կատարենք փառաւորելու համար զԱստուած եւ մեր վրայ հրաւիրելու անոնց բարեխոսութիւնը, լաւագոյն կերպով նմանելու համար անոնց օրինակին. անոնց ի նպաստ չէ՛ որ կը մատուցանենք սուրբ Պատարագը, այլ անոնց յիշատակութիւնը կը կատարենք, վերի իմաստով: Մինչ ննջեցեալներու յիշատակութիւնը կը կատարենք Ս. Պատարագին մէջ (ինչպէս նաեւ ողջերուն) ի նպաստ եւ ի շահ այդ հոգիներուն եւ մեզի. եւ ոչ միայն պարզ յիշատակութիւն, այլ սուրբ Պատարագն ինքնին կը նուիրենք այդ զինուորութեան:



ՅՈՎՀ. ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Յովհ. Մանդակունի կաթողիկոսին վերադրուած ճառերուն մէջ ալ, զրուած 480ի ատենները, կը հանդիպինք նման դադափարներու²⁰:

1. - «Թուղթ մխիթարութեան վախճանելոց յաշխարհէս» ճառին մէջ Մանդակունի Հայրապետը նախ գերբնական աչքով նկատել կու տայ՝ թէ «լաւ է օր մահուան քան զօր ծննդեան»²¹, որովհետեւ մարդս միայն մահով է որ կը դադրի մեղանշելէ, եւ եթէ արդար էր՝ կը թռչի հողով դէպի սուրբերու ձերանական եւ մշտնջենաւոր բնակարանը. ուրեմն, կ'եղբարեացնէ, աւելորդ եւ անիմաստ է չարիադանցեալ լացն ու կոծը, տարապաժան

սուգը, եղբարմայրերու տխրաթախիծ ողբն ու երգը. եկեղեցական պաշտօնեաներու աղօթքն ու մաղթանքը եւ աղմոսանուագ բարեխոսութիւնն անգամ՝ ի նպաստ ննջեցեալին՝ անօգուտ կը մնան, երբ միւս կողմէ այդ սատանայազգեաց զիւսմով կոծողները կը բարկացնեն զԱստուած:

Մանդակունիի քով ալ ակնյայտնի է ողջերու կողմէ կատարուած բարեխոսութիւնը « վասն քողութեան մեղաց վախճանելոյն»²². ու կը յանձնարարէ. «Եթէ ես ինչ հոգաբարձու հրաժարելոյն, յեկեղեցիս քո յիշեալ եւ յաղօթս քո աղաչեալ զԱստուած»²³: Այս է, իրեն համար, ինչպէս տեսանք Յաճախապատուի մէջ ալ, խկական ու ճամարիտ սուգը:

2. - Մանդակունի աւելի եւս կը մանրամասնէ՝ երբ ննջեցեալին մեղքերուն ակնարկելով կ'ըսէ.

« Եւ եթէ սուղ ինչ իցէ ատգտեալ, օգնեսցուք նմա գրով տնանկաց, յիշեսցուք յաեղ խորհրդին, ողորմութիւնս վասն նորա արացցուք. եւ այն է կաշառ բարեբարին Աստուծոյ՝ որ առնէ բարեբարութիւն ի վերայ վախճանելոյն, որպէս ինքն գիտէ »²⁴:

Ահաւասիկ յիշատակութիւնը ննջեցեալին՝ ահեղ խորհուրդի մատուցման ընթացքին, այն է՝ Ս. Պատարագի մէջ, որուն արդիւնքով - զիւսուոր է կաշառքի նմանութիւնը - Աստուած կը զթայ ննջեցեալին, ըստ իր անքնին իմաստութեան: Եւ այս յիշատակութիւնը է եղակի յիշատակութիւն մը, մասնական անհատի մը յիշատակութիւնը, ինչպէս ողորմութիւնն ու աղօթքը անհատի մը համար էր:

3. - Մխիթարական խրատները աւելի եւս սաստկացնելով կ'ըսէ.

« Այլ դու մխիթարեալ եւ գոհացիր զԱստուծոյ, զի քոյդ (քու ննջեցեալը) հան-

16. Անդ, էջ 170:

17. Անդ, էջ 172:

18. Անդ, ճառ ԺԶ, էջ 190:

19. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ, տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1898, էջ 1230:

20. Կարապետ Եպս. Մանդակունիի այս ճառերը կ'ընծայէ Յովհան Մայրապետեանի տես Շոգակար, Վաղարշապատ, 1913, էջ 84-113:

21. Տեսուն Յովհաննու Մանդակունոյ... հաւտ,

տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1860 (Բ. տպ.) էջ 175:

22. Անդ, էջ 177:

23. Անդ, էջ 177:

24. Անդ, էջ 178:

գրասեանք հիւանդացաւ, եւ օրհնութեամբ վախճանեցաւ, պատանօք պատեցաւ եւ սաղմոսիւք յղարկեցաւ եւ քահանայական աղօթիւք եւ պատարագօք յերկինս առաքեցաւ, եւ հանապազօրօք օրհնի եւ յիշի ի յիշատակացն կատարելոյ»²⁵:

Ի՞նչ են այդ քահանայական աղօթքներն ու մանաւանդ պատարագները: Պատարագ բառը կրնայ նշանակել գոհ, կրնայ նշանակել նաեւ նուէր: Մեր արդի իմաստով Ս. Պատարագ բանաձեւին տեղ՝ ընդհանրապէս հին մատենագիրներու քով կը գտնենք անեղ խորհուրդ, սուրբ խորհուրդ բացատրութիւնը: Արդ, ի՞նչ իմաստով առնելու ենք Մանդակունիի այս հատուածին մէջ պատարագ բառը: Արդեօք քահանայական նուէրներ (պատարագներ) ըսելով՝ կը հասկնայ քահանաներուն տրուած նուէրները, գրամը եւն...: Բնագրին վերայ յենելով, եթէ աղօթքները՝ քահանաներուն կատարած աղօթքներն են (քահանայական աղօթիւք եւ պատարագօք), նոյնը պիտի խորհինք նաեւ պատարագներու կամ նուէրներու մասին. ուրեմն, քահանաներու կողմէ կատարուած նուէրներ, գոհներ. եւ ո՞րն է քահանային կողմէ եղած նուէրը, բայց եթէ նուէրներու գերազույնը, Ս. Պատարագը, Ս. Զոհը: Այս հատուածին մէջ մատաղի խօսք եւ ակնարկ չկայ ամենեւին: Ուրեմն, կը մնայ հետեցրենք՝ թէ խօսքը Ս. Պատարագի մասին ըլլայ, ի նպատակ ննջեցեալին մատուցանելի. եւ այս իմաստով ալ կրնայ կապուիլ յաջորդ տողերուն հետ, թէ «հանապազօրօք օրհնի եւ յիշի ի յիշատակացն կատարելոյ», այն է՝ Ս. Պատարագով, որ է գերազույն յիշատակը Քրիստոսի սուրբ չարանքներուն:

Ամէն պարագայի, այս հատուածը թերեւս կրնայ տարբեր կերպով ալ մեկնուիլ. ներկայացուցինք մեր գաղափարը, զոր աւելի համեմատել կը նկատենք մեր նախնեաց ուրիշ գրուածքներու հետ, եւ զորս պիտի տեսնենք յաջորդաբար:

25. Անդ, էջ 179:

26. Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մա-

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Մանդակունիի քով աւելի նուազ են մեր նիւթին շուրջ խօսող հատուածները. բայց այդքանն ալ բաւական է համոզուելու համար թէ ան չի հեռանար Յաճախապատու մի աւանդութենէն:

Ամէնէն առաջ ցայտուն է ողջերու եւ ննջեցեալներու փոխադարձ նպատամասնությունը աջակցութիւնը. աղօթք, նուէր, պատարագ՝ ի նպատակ ննջեցեալին՝ կը բարձրանան երկինք, կարծէք կաշառելու համար բարեգութ Արարիչը, որ կը գլխայ իր իմաստութեամբ, կը ներէ եւ հանդիստ կը շնորհէ մեզմէ յաւիտեան բաժնուողներուն:

Ս. Պատարագի մասին ակնարկը (ի նըպատակ ննջեցեալին) այնքան յստակ չէ. պէտք է խոստովանիլ որ Մանդակունի բացայայտօրէն չի ծանրանար այս կէտին վրայ. բայց նաեւ չի մերժեր դայն. ու թերեւս իր բանաձեւները աւելի գրական կողմը կը հակին քան ժողովրդական:



Ե Ղ Ի Շ Է

Վարդանանց պատերազմի զիջողներու գաղ պատմիչը ճառեր ալ գրած է, որոնցմէ մէկը «Վասն յիշատակաց մեռելոց ի կանոնական Գրոց»²⁶ աւելի եւս կրնայ լուսաբանել մեր նիւթը:

1. - Խօսելով Ս. Պատարագի հաստատութեան մասին եւ աւանդելով՝ թէ չէ՛ կարելի անկնունքներուն Ս. Հաղորդութիւն տալ, «տէրունական է կանոնս», ննջեցեալներուն ակնարկելով կը յաւելու. «Հրաման տուեալ մնացելոցն որ աստէն՝ զի առնիցեն յիշատակ հանգուցելոցն. զի մեռեալ է մարմինն եւ կենդանի է հոգին. եւ կենդանարար է աստուածութիւնն, որ առ ունիւրութեամբ գեղեցիկէն՝ զոր ինքն ստեղծ»²⁷:

տեմագրութիւնք, տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1838, էջ 287-292:

27. Անդ, էջ 288:

Ընդհանուր սկզբունքն է որ հոս կու տայ Եղիշէ. աղօթել ննջեցեալներուն համար՝ է պատուէր մը, հրաման մը տէրունական:

2. - Յաջորդաբար Ս. Հաղորդութեան եւ Պատարագի հաստատութեան նկարագրութիւնը կու տայ եւ կ'աւելցնէ.

«Եւ է սա յիշատակ արարեալ Աստուածն Բանի կատարեալ եւ կուսածին մարմնոյն, զոր ոչ կարաց մահ արգելուլ ընդ ապականութեամբ. եւ խառնեալ ի սա Տեառն ըստ իւրոյ բարեարարեանն, եւ յիշատակ մերոյ մարդկութեանս: Զի եթէ ա՛ն մարմին զիմ բնակիցս եւ ետ ինձ իշխանութիւն զիւրոյ աստուածութեանն եւ պատմիչ կացոյց զիս իւրոց չարչարանացն, անա յայտ է՝ թէ եւ ես ունիմ իշխանութիւն հանգուցելոցն առնել զյիշատակ նոցա ի յիշատակն Քրիստոսի: Զի յարժամ սրբութեամբ առնել՝ օգտիմ եւ օգտեցուցանել. օգտիմ՝ զի եւ զիմ հոգիս ի հանգուցելոցն խառնել, եւ օգտեցուցանել՝ զի վկայ եմ ընդ մարիտ հաւատոյ հանգուցելոցն: Ապա եթէ այդպէս իցէ, ոչ միայն պարտիմք հանգուցելոցն յիշատակ առնել, այլ եւ տուրս առատաձեռն բաշխել մեզ՝ ի քաղաքիս մեղաց, ի գովելի հաւատս ազատաց, ի հանգիստ մխիթարութեան հանգուցելոցն...»²⁸:

Ուրեմն, ըստ Եղիշէի, Քրիստոսի մահուան այս խորհուրդը՝ յիշատակն է Քրիստոսի յաղթանակին ընդդէմ մահուան. եւ ասա այդ կենդանարար զօրութեան համար զորդ կ'ըլլան քահանաները. հետեւաբար, անոնք իշխանութիւն ունին հանգուցեալներուն յիշատակը խառնել Քրիստոսի յիշատակին հետ, Ս. Պատարագին մէջ: Ասոր հետ կարեւոր են նաեւ առատաձեռն նուէրներ՝ ննջեցեալներու մեղքերու քաւութեան եւ հանգստեան համար:

3. - Յաջորդաբար Եղիշէ կը խօսի մեղաւոր ջրիստոնեաներու մասին, որոնց թէեւ չէ կարելի կրկին մկրտութիւն տալ,

28. Անդ, էջ 288-289:

29. Անդ, էջ 291:

սակայն ապաշխարութեան ճամբով կրնան վերստին հոգեպէս կենդանանալ. իսկ եթէ անգեղջ բաժնուին այս աշխարհէն՝ կ'ըսէ.

«Թուի ինձ եւ ամենեցուն՝ թէ այնպիսովն յիշատակ չէ արժանի առնել, եւ ոչ տուրս բաշխել ի քաղաքիս մեղաց նորա: Ապա եթէ ի ժամ վախճանին զղջացի, ընդունել արժանի է՝ հայելով ի մարդասիրութիւնն Աստուծոյ. ի վերայ այս տուրս տալ արժան է յանուն հրաժարելոյն, թերեւս ընկալցի ողորմութիւն՝ գրացեալ ի նա»²⁹:

4. - Հուսկ՝ խօսելով անմեղ երախաներու մասին, որոնք «հրաժարեցին յաշխարհէս առանց մկրտութեան», նախ կը բացատրէ թէ ի՞նչ աստիճանի է այդ անմեղութիւնը, եւ հեղինակօրէն կ'ուսուցանէ թէ ի՞նչ է այն իսկական ու գերբնական անմեղութիւնը՝ որ կու դայ մի միայն սուրբ աւաղանին վեհանարար ջուրով. եւ այդ առթիւ մկրտութեան անհրաժեշտութեան եւ զօրութեան մասին խօսելէ վերջ, կ'ըսէ.

«Ասեմ՝ թէ յայնպիսեացն անուն ոչ է արժան պատարագս մատուցանել, քանզի ի կենդանութեանն իւրում ոչ եղեւ արժանի կենարար շնորհին: Ո՞վ այնչափ յանգուցն իցէ եւ տգէտ, որ աստի անդրաշմն յուղարկեցաւ, եւ քակեալ տրոհեցաւ բարձանելեան եւ անբարձանելեան. զոր չիք հնար ի միմեանս յարել միմեանս ի ժամանակս վերստին նորոգմանն. այլ տուրս տալ միայն վասն այնպիսեացն յարժանաւոր տեղիս, աղաչել զպատարուն ամենեցուն բազում բարեխօսիւք, զի ապրեցուցէ զվրիպեալն յանշէջ հրոյ գեհեմոյն»³⁰:

Ուրեմն անկնունք մեռնող անմեղ երախաներու անունին, այսինքն անոնց հոգւոյն ի նպատակ պատարագ անգամ չէ կարելի մատուցանել: Ի՞նչ է այս պատարագը. արդեօք նուէր կը նշանակէ. բացարձակապէս ո՛չ. որովհետեւ նուէրներու եւ բարեկործութեանց մասին քանի մը

30. Անդ, էջ 291-292:

տող վերջ կը խօսի ըսելով՝ թէ հնարաւոր է «տուրս տալ միայն վասն այնպիսեացն յարժանաւոր տեղիս»։ Նուիրատուութիւններ կարելի է ընել, բայց պատարագ՝ ո՛չ։ Ուրեմն բուն պատարագի, Մանդակունիի բառերով՝ սուրբ եւ ահեղ խորհուրդի մասին է խօսքը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Եղիշէի համաձայն՝ երեք դասերու կառելի է բաժնել մեղի կարօտ ննջեցեալները։

ա) մկրտուած բայց անգեղջ մեղաւորներ, որոնց համար ո՛չ պատարագ կարելի է մատուցանել, ոչ նուիրատուութիւն կատարել։

բ) անկնունք անմեղ երախաներ, որոնց համար միայն նուիրատուութիւն կարելի է կատարել, բայց պատարագ՝ ոչ։

գ) մկրտուած զղջացեալ մեղաւորներ, որոնց համար թէ՛ պատարագ կարելի է մատուցանել եւ թէ՛ նուիրատուութիւններ կատարել։

Պիտի ուղէի նկատել տալ որ «յանուն հրաժարելոյն», «յայնպիսեացն անուն» (տուրս տալ, պատարագ մատուցանել, յիշատակ առնել) կը նշանակեն միշտ ի նպատակ, յօգուտ, ի շահ։

Հուսկ հաւանորէն կարելի է նոյնացնել պատարագ մատուցանել եւ յիշատակ առնել բացատրութիւնները, (Մանդակունիի քով՝ յիշատակ կատարել) լաւագոյն կերպով մեկնաբանելու համար վերոյիշեալ կտորները։



ԱՐԲԱՆԱՄ ԵՊՍԿ. ՄԱՄԻԿՈՆԵՒՅ

Մովսէս Կաղանկատուացի պատմագրին համաձայն՝ հինգերորդ դարու վերջերը,

աւելի ճիշտ՝ 489ի տառնները, Աղուաններու վաչագան թագաւորը թղթակցութիւններ կ'ունենայ Հայաստանի Արքայ-համ Եպիսկոպոսին հետ։ Բանասէրներէն ոմանք այս թղթակցութեան թուականը կը սահմանեն 533-550ի տառնները³¹։ Այս նամակներէն մէկն է քուղք սակս ննջեցեալ, պահուած Կաղանկատուացիի պատմութեան մէջ (Ա. ին.)³², ինչպէս նաեւ առանձնաբար ճառընտիրներու մէջ³³։

Այս նամակն ալ մեր ամենահին յիշատակարաններէն մէկն է՝ որ կը խօսի ննջեցեալներու ի նպատակ կատարուած աղօթքներու մասին։ Ու թէեւ Ս. Պատարագի մատուցման նկատմամբ բացայայտ վկայութիւն մը չունի, սակայն պարզ կը համարենք կարեւոր մասերը արձանագրել այստեղ, քանի որ ժամանակին Փառն Սրբազան պատգամած էր թէ «մինչեւ ԺԱ-ԺԲ դար հայ Եկեղեցւոյ եւ հայ մատենագրութեան մէջ ո՛չ ննջեցեալ կանոն կար եւ ո՛չ որեւէ ճառ»³⁴։ Յարգ մեր տեսածներէն իսկ կը հերքուի այս սին բացատրութիւնը, որ չափազանցութիւն մըն է դիտումնաւոր, պղտորելու եւ խեղաթիւրելու համար միամիտ ընթերցողներու մտքերը։

«Աստուած, որ ընդունիչ է պատարագի եւ կատարիչ ուխտից՝ լսէ աղօթից կենդանեաց, եւ ընդունի գպատարագացն եւ քեքեւացուցանէ գրեոհին յօգուտ մեռելոց յուսով ննջեցեալ. գոր եւ ուսուցանեն մեզ Գիրք սուրբ։ Որպէս Եղիշէս ոչ մանկան մեռելոյ լսէր, այլ մօրն աղաչանաց լսելով կենդանացոյց գնաւուկն եւ աւանդեաց մօրն։ Եւ Տէր Աստուած մեր գրեցեալ յայրին, յարոյց գրիաւօր որդի նորա։ Եւ առաքելոցն յայրեացն արտասուս եւ ի հառաչանս նայելով՝ յարուցին

գճարիքայն եւ աւանդեցին գնաւուցա։ Արդ երբ ընտանեացն աղօթք ի մեռելութենէ ի կենդանութիւն կարեն ածել, ապա յաստուածային գորութենէն կարի յոյժ եւ մեղաց քողովիւն հաւատացուի առնուլ՝ յուսով ննջեցեալոցն, որ կենդանիս վասն հանգուցելոցն խնդրեմք գրողութիւն մեղաց յԱստուծոյ ներողութենէն»³⁵։

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

1. - Աստուած ողջերու աղօթքներուն եւ նուիրատուութիւններուն ի տես՝ կը զթայ ննջեցեալներուն, որոնք յոյսն ունին վերելու, եւ կը թեթեւցնէ անոնց բեռները։ Հողիներու բեռները մեղքերն են. ուրեմն կը ջնջէ զանոնք, կը թեթեւցնէ անոնց պատիժները։

2. - Ողջերու այս միջամտութիւնը կը հիմնուի Աստուածաշունչի վրայ, աստուածային յայտնութեան վրայ։ Եղիշէ, Քրիստոս, Պետրոս եւ իր առաքելակիցները յարութիւն կու տան մեռելներու՝ ողջերու թախանձանքին վրայ։ Ասոնք աղու օրինակներ են։

3. - Հաւատանք, ուրեմն, որ ողջերու աղօթքներուն միջնորդութեամբ՝ ննջեցեալները մեղքերու թողութիւն կը գտնեն Աստուծոյ. «յաստուածային գորութենէն... յԱստուծոյ ներողութենէն»։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ըսինք թէ Ս. Պատարագի մատուցման մասին աւանդիչ չկայ հոս. սակայն կայ անդրադարձութեան արժանի ուրիշ կէտ մը, զոր պէտք է այժմ վեր հանել, համեմատելով նախորդ ըսուածներուն հետ։

Այս հատուածին մէջ ամենեւին խօսք չկայ վերջին գաղափարների մասին. ննջեցեալներու մեղքերու թողութիւնը, ըստ բնագրին, կը կատարուի իսկոյն, ի տես

ողջերու թախանձանքին. ո՛չ թէ պիտի կատարուի ապագային, կամ վերջին դատաստանին։ Ներկայ ժամանակով կը նրկարագրուին Աստուծոյ գործերը. «լսէ... ընդունի... քեքեւացուցանէ»։

Ուրեմն, հիմնովին սխալ է Փառն Սրբազանի այն տեսակէտը որ իբր թէ Հայաստանեայց Եկեղեցին կ'աղօթէ ննջեցեալներուն համար այն համոզումով՝ թէ Աստուած պիտի զթայ անոնց Քրիստոսի վերջին գալստեան կամ աշխարհի կատարածին օրը³⁶։ Յարգ մեր տեսած բնագիրները այդպիսի բան մը չյայտնեցին. ուրեմն, մտացածին եւ յերկրածոյ էր Փառն Սրբազանի հաւատումը։

Միակ եղրակացութիւնը այն է որ մեր նախնիք, սկիզբէն ի վեր, գտնէ Ե. դարէն, եւ անշուշտ անկէ առաջ ալ, պաշտամունքն ունէին ննջեցեալներու։ Պաշտամունք՝ սա իմաստով. օգնել անոնց աղօթքով, նուիրատուութիւններով ու մանաւանդ Ս. Պատարագով. մեր բնագիրներէն ոմանք խօսեցան այս բոլորին վրայ, ոմանք՝ միայն այս կամ այն ձևով օգնութեան կամ նպատակին վրայ. եւ ահա այս նպատակներով՝ Աստուած կը քաւէ, կը ներէ, կը ջնջէ, կը թեթեւցնէ անոնց մեղքերը, պատիժները եւ տառապանքները։

Ասկէ աւելի բացայայտ վկայութիւն հարկ կա՞յ ներկայացնել՝ ցուցնելու համար թէ մեր նախնիք կ'ընդունէին քաւարանը, յետ մահու ժամանակաւոր պատիժներու տանջարանը, մաքրարանը, ուրիշ ննջեցեալներու հողիները աղատելու համար են այս բոլոր աղօթքները՝ ողջերու կողմէ։

Բայց այս մասին աւելի ընդարձակ յանդերձնելով։

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ
(Շարունակելի)

31. Արքահամ Մամիկոնեից Եպիսկոպոսն եւ իւր առ վաչագան գրած քուղքն, Հրատարակեց Հ. Բարսեղ Սարգիսեան, Եպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1899, ներածութիւն էջ ԺԳ-ԺԷ։

32. Մովսիսի Կաղանկատուացոյ Պատմութիւն Ազնունից աշխարհի. ի յոյս ընծայեց Մկրտիչ Էմին, Եպ. Մոսկով, 1860, էջ 64-65։

33. Հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վեներիկ (հեղ. Հ. Բարսեղ Սարգիսեան), Հատոր Բ. Եպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1924) սխալակ 82, 218, 415, 1115։

34. Հասկ, ԺԷ. (1948, Թ. 8-9) էջ 228։

35. Մովս. Կաղանկատ. անդ, էջ 64-65։

36. Հասկ, ԺԵ. (1946, Թ. 9-10) էջ 250. ԺԷ. (1948, Թ. 10) էջ 263։